

Թիւ 20371  
Մարտ 19, 1968

Հոգեշնորհ

Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան  
Հոգեւոր Հովհիւ Ա. Աստուածածին Սկեղեցւոյ  
եւ Նախագահ Շխական Անդամական ժողովի  
Ուստչինկըլն.

Միրելի Հայր Փառէն,

Մարտ 12ին ստացանք Փետրուար 4, 1968ին գումարուած նկեղեցւոյդ  
Միական Անդամական ժողովի ատենագրութիւնը եւ նկեղեցւոյդ կազմակերպութեանց տեղեկագիրները, որոնք երեւան կը բերեն գնահատելի կանոնարութիւններ:

Նկատի առինք որ Միական Անդամական ժողովի օրինական մեծամասնութիւն չէ ունեցած եւ հետեւաբար որոշումները պէտք է տրուած ըլլալին,  
ժողովին մէջ արձանագրուած 51 անդամներու երկու-երրորդին դրական  
քուէարկութեամբ:

Ուստի, Միական Անդամական ժողովի որոշումները չենք նկատեր օրինաւոր եւ Զեզ կը յայտնենք մեր հետեւալ որոշումը.-

1. Միական Խորհուրդի դադարեալ չորս անդամներու տեղ ընտրուած  
անձերէն Տիար Հերթի Պէյքըր ստացած ըլլալով ժողովականներուն  
երկու-երրորդին դրական քուէները, կը համարենք օրինաւորապէս  
ընտրուած երկու տարի պաշտօնավարելու իրաւունքով:
2. Տիարք Աշոտ Գրիգորեան, Արամ Սագոյեան եւ Օհաննէս Սահակեան,  
որոնք յաջորդ առաւելագոյն յուէէ ստացողներն են, կը նշանակենք  
Անդամ Միական Խորհուրդի, արտօնելով որ պաշտօնավարեն մէկ տարի  
մինչեւ յաջորդ Տարեկան Միական ժողով, որու ընթացքին Թեմական  
Կանոնադրութեան համաձայն կը յուսանք որ պատշաճ կարդարութիւններ կը կատարէք:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Միական Խորհուրդի նոր Դիւանի  
անդամոց եւ նկեղեցւոյդ Ենթակայ մարմիններու ատենապետներուն անունը,  
հասցէն եւ հեռաձայնի թիւք:

Օք Հնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Զեզի եւ Զեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ա. նկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Աաջնորդ